

ԼԵԶՈՒՄԳԻՑԱԿԱՆ

ԽԱԼԴԵՐԷՆԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)

Նախ քան հայերի գաղթը Հայաստան, այս երկիրը բնակուած էր մի առանձին ժողովրդով, որ կրում էր խալդի անունը: Երկիրը մէկ պետութիւն չէր կազմում, այլ բաժանուած էր զանազան իշխանութեանց, որոնցից ամենամեծերն ու նշանաւորներն էին:

1. Խափրի, Վանայ ծովի հարաւային կողմը.

2. Բիայնա, Վանայ ծովի արևելեան կողմը.

3. Ռւբարու, Վանայ ծովի հիւսիսային կողմը:

Այս ժողովրդի ծագութն ու նախնական պատմութիւնը բնաւ յայտնի չէ մեզ. պատմութեան մէջ առաջին անգամ երեան է զալիս Ն. Ք. ԺԴ. դարում, ասորեստանցոց դէմ մղած պաշտպանող ական պատերազմներով:

Ասորեստանցիք Միջագետքում կազմելով մի մեծ պետութիւն, ուղեցին նուաճել իրենց հրւիսային հարեւաններին: Առաջին թագաւորը՝ որ արշաւեց նախրիի վրայ Սալմանասար Ա. Ն է (1330-1316), որ Տիգրիսի հովիտով բարձրացաւ դէպի Տիգրանակերտի դաշտը: Նրա որդին Թողութ-Ադար Ա. (1310-1270) արշաւեց կորզուաց աշխարհը. բայց այս արշաւանքները թողլ բաներ էին և յաջորդ թագաւորները իրենց ներքին կոլուներով դրագուած՝ ստիպուած էին նոյն իսկ նինուէին: Այն բոլոր պետութիւնները՝ որ գտնւում էին Ասորիքի շրջանում, Հաթերը, Կումմուխ, Կարկմիշ, Մալաթիա, Համաք, Դամասկոս, Սամարիա, Հրէաստան, Փիւնիկէ, Փղշատացիք, Տիւրոս, Մովարի և Ամմոնի փոքր երկիրները և Մարաստան մտան Խալդիների զաշնակցութեան մէջ իրեւ Վասոլ երկիրները: Եւ այսպէս Խալդին դրածաւ Արեւելքի ամենամեծ պետութիւնը:

Ասորեստանցոց պետութիւնը նորից զօրացաւ թագլաթ-Պալասար Ա. ի ժամանակ (1108-1080), որ մի մեծ աշխարհակալ եղաւ, երեք անգամ արշաւեց նախրիի վըրայ և հասաւ մինչև Վանայ ծովը, հարկատու դարձնելով այն կողմերի բաղմաթիւ մանր իշխանները:

(*) Վեցուած մեծանուն նեղինակի Պատմութիւն Հայ Լեզուի գործեն (Զ. Գլուխ):

Արանից յետոյ Ասորեստանի պետութիւնը նորից ընկաւ. նուաճուած ժողովութիւններից Բարելացիք, Հաթերը, Հրէաստան և Դամասկոսիք ապստամբելով անկախութիւն ձեռք բերին. շարժուեց նաև Խափրին, և թօթափելով հարկատուութեան լուծը՝ անկախ կառավարուեց մօտ 200 տարի:

Ասորեստանցոց թուլացած պետութիւնը նորոգելու ձեռնարկեց թուգուլթի - Նինիպ Բ. (889-885), որ նորից արշաւեց դէպի Խափրի: Իր յաջորդները շարունակեցին իր գործը և նուաճնեցին մինչև Միջերկրական ծովը: Նուաճուած ժողովութիւնը և Ասորեստանի միջև սկսուեց մի մեծ պատերազմ. արեւուտքի բոլոր ժողովութիւնները միացան և մի հզօր դաշնակցութիւն կազմեցին Ասորեստանի դէմ: Ասորեստանցոց թագաւորը 21 անգամ արշաւեց նրանց վըրայ և այդ դաշնակցութիւնը խորտակեց: Նոյնպիսի մի դաշնակցութիւն կազմեցին նաև Խալդիական ցեղերը, որոնց գլուխն անցաւ Ռւբարտուի Արամէ թագաւորը (860). Դաշնակցութեան կենտրոնը եղաւ Բիայնայի Տուպավա քաղաքը, որի բարձրաբերձ և անժամատչելի ժայռերի վրայ հիմնուեց Վանայ բերգը: Ռւբարտեան թագաւորները նուաճնեցին արևելքից մինչև Ռիմիոյ լիճը եւ կասպից ծով, արեւուտքից մինչև կիլիկիա և Ասորիք, հրւիսից մտան Կուրի հովիտը, իսկ հարաւից սպառնում էին նոյն իսկ նինուէին: Այն բոլոր պետութիւնները՝ որ գտնւում էին Ասորիքի շրջանում, Հաթերը, Կումմուխ, Կարկմիշ, Մալաթիա, Համաք, Դամասկոս, Սամարիա, Հրէաստան, Փիւնիկէ, Փղշատացիք, Տիւրոս, Մովարի և Ամմոնի փոքր երկիրները և Մարաստան մտան Խալդիների զաշնակցութեան մէջ իրեւ Վասոլ երկիրները: Եւ այսպէս Խալդին դրածաւ Արեւելքի ամենամեծ պետութիւնը:

Շատ երկար տևեցին այն պատերազմները, որ մղեցին Ասորեստանցիք նուաճելու համար այս երկիրները և խորտակելու դաշնակցութիւնը: Վերջապէս ընկաւ Կարկմիշը և Հաթերի պետութիւնը կործանուեց (717). Նրանից քիչ յետոյ ջարդուեց Ռւբարտուի թագաւորը Ռուսաս և Խալդիրի դաշնակցութիւնը խորտակուեց (714): Դըրբանից յետոյ Խալդիան ընկաւ ու հասաւ

երկրորդական պետութեանց չարքը . իրենց թագաւորները խոհմութիւն համարեցին ամփոփուիլ իրենց սահմանների մէջ , երբեմն տարեկան նույներներ ուղարկելով Ասուրեատանեան թագաւորներին՝ հաշա ու բարեկամ մնալ նրանց հետ և իրենց բովանդակ ուշադրութիւնը դարձնել Ասպիդիոյ ներքին բարօրութեան վրայ : Այս վիճակը տեսւց մինչև Կիմմերների արշաւանքը որ եւ կաւ տակն ու վրայ անելու Ասիան :

Կիմմերները հնդեւրոպական մի ժողովուրդ էին , որ բնակում էին հարաւային Խուսաստանի տափաստաններում , Ազովի ծովի եղերքին : Միջին Ասիայից , բարբարոսների մի նոր ցեղ որ կոչում է Շակ կամ Սկիւթացի , ճանապարհ ընկաւ զէպի արևմուտք : Անցնելով Կասպից ծովի հրասաւային տափարակներից , Ակիւթացի բարբարոսները փոռւեցին մինչև Դոնի հավիտք : Կիմմերները զարհուրելով նրանցից փախան զանազան ուղղութեամբ (750) : Մի մասը մտաւ Խրիմ , երկրորդ մասը՝ Թրակիայի եւ Վասպորի վրայով , անցաւ Փոքր Ասիա , իսկ երրորդ և աւելի ստուար մտար Կովկաս : Կիմմերներին հետեւցին նաև Սկիւթացիք և լցուեցին Կուրի հավիտք , Աւրատու՝ մինչև Մարաստան , Ասորեստան եւ Եղիպտոսի սահմանները : Ամբողջ արեւելքը նրանց ասպատակութեան և աւելումի ասպարէզ գարձաւ , բայց յատկապէս Խալդիան , որ Ակիւթացի եւ Կիմմեր բարբարոսների կենտրոնավայրն էր դարձել : Քաղաքները կործանուեցին , ժողովուրդը ջարդուեց , զալթեց , երկիրը աւերակ գարձաւ :

Այդ միջոցին Խալդիայի սահմանների վրայ երկու նոր ժողովուրդներ երեացին . արևելեան կողմում զօրացան Մարերը՝ որոնց թագաւորը Կիսաքսար՝ նուածեց Նինուէն , զրաւեց Ասորեստանցոց պետութիւնը (608) , ջարդեց Սկիւթացիներին և արեւելքից դուրս վտարելով՝ կիմմեր մի զօրաւոր պետութիւն : Արեւտեան կողմում ասպարէզ զուրս եկան Հայերը (Արմենները) , ուրինք այն ժամանակ բնակեում էին Ալիսի հավիտք : Ցնցուելով Կիմմերների և Փոքր Ասիայ միւս ժողովուրդների շարժումից , նրանք անցան Եփրատը և մտան Արածանիի հովիտք : Խալդիները ուժ չունեին զիմմադրելու նորեկներին . Խալդիոյ արևելեան նահանգները իրենց մայրաքաղաքով միա-

մին (Վան , Վասպուրական եւն .) անցան Մարաց իշխանութեամ . Խալդիները հետքին ետք քաշուեցան դէպի հրասիս եւ հիւսիս-արևելք , ասպարէզը թողնելով արևելքից Մարերին և արևմտութից Հայերին :

Երկու գար աեեց Հայերի յառաջացումը . այս ժամանակամիջոցին նրանք կամաց կամաց մէկ կողմից բարձրանում էին դէպի հրասիս և արևելք , միւս կողմից իշխան էին դէպի հարաւ : Հիւսիսից հասան մինչև Կուրի հովիտք , իսկ հարաւից անցան Տօրոսի լեռնաշղթան և հասան Տիզրիսի արևելեան ճիւղը՝ որ Հայաստանի սահմանն է : Այս երկու գարի ընթացքում Հայերը աճեցին և զօրացան և այնպէս ծուլեցին բնիկներին իրենց մէջ , որ երկու գար յետոյ արագէն նալդ ու Խալդիա չկար , այլ կազմուել էր մի ժողովուրդ և մի երկիր՝ Հայ ու Հայաստան :

Լեզուների պատմութեան մէջ նկատուած է , որ երր մի օտար ցեղ տիրում է մի ուրիշ ժողովուրդի և միանում է նրա հետ , թէե իր լեզուն պարտադրում է նըրան , բայց ինքն էլ փօխագարձարար կրում է բնիկների լեզուի և քաղաքակրթութեան ազգեցութիւնը , բազմաթիւ բառեր փոխն առնւում տիրուղների լեզուի մէջ , բընիկների սճարանութիւնը թարգմանուում է նոր լեզուով , վերջապէս ամրող զարտանութեան եղանակը փօխուում է :

Այս լեզունուր օրէնքից չէր կարող բացառութիւն կազմենան հայերէնը , անտարակոյս նա մեծապէս ենթարկուեց խալդիներէն լեզուի ազգեցութեան և աւելի քան ուրիշ որեէ ազգից կրեց խալդիներէնի կընիքը , որովհետեւ հենց խալդիներն էին որ կազմեցին նոր հասարակութեան մի կարեռ մասը : Ահա այս պատճառով հարկաւոր է մեզ ժանօթանալ նախ խալդիներէն լեզուին ու զրականութեան :

Խալդիները զրութեան արուեստին ծանօթացան Ասորեստանցոց միջոցով : Սարզուրի Ա. Բիայնայի թագաւորը (835-820) Ասորեստանից բերել ատալով վարպետներ , նրանց ձեռ քով և Ասորեստանին լեզուով քանդակի տուեց վանում մի քանի արձանագրութիւններ , որոնց մէջ պատճում էր իր քաջագործութիւնները : Ասորեստանցոց թագաւորների օրինակով նրա յաջորդը

իսպուինիս (820-800) հիմք զրաւ զռւա
խալդեան ազգային գրականութեան Այդ
օրուանից սկսած խալդեան թագաւորները
թողել են մեզ հարիւրաւոր մեծ ու փոքր
արձանագրութիւններ խալդերէն լիզուավ,
որոնց մեծագոյնն է Սարգուրի Բ. ի արձա-
նագրութիւնը (100) տագավար Խոկ հնագոյնը
սրբան էլ որ յայս ունենանք գտնելու նո-
րանոր, թե կուկ հաղարաւոր արձանագրու-
թիւններ, չպիտի անցնի Ն. Ք. 820 թիւը,
քանի որ այդ ժամանակ արդէն ոչ թէ խալ-
դերէն, այլ ասուրերէն էին գրաւմ, ինչպէս
յոյց է տալիս Սարգուրի Ա. ի քարերը
(Այսու, էջ 403):

Այս արձանագրութիւնները գրուած են
Ասորեստանի բնելագիր զրութեամբ,
բայց Ասորեստանի բնելագիր զրութիւնը
միշտապանց բարդ ու գժուար բան էր: Իր
բազմաթիւ գաղափարանչանները, այսու-
բենի բազմածայն արժէքը, մինչոյն նըշա-
նագրի մերթ իրը գաղափարագիր և մերթ
իրը առանձին տառ գործածութիւնը մինչև
այսօր էլ կազմում են մի անլուծելի հան-
գայց: Խալդիները ըստ կարեւոյն պարզե-
ցին այդ գրութիւնը, դժուարութիւնները
ջնջեցին և դարձրին ըստ կարեւոյն տանելի
մի վանկային գրութիւն:

Ահա այս զրութեամբ էլ զրուած են
խալդեան արձանագրութիւնները:

Առաջին եւրոպացի զիտունը, որ ըզ-
բազուեց այդ արձանագրութիւններով, ֆր-
քանացի հայագէտ Աէն-Մարտէնն էր: Մի
առանձին յօդուածում՝ որ հրատարակուած
է ասիական ամսաթերթում (1823թ.), քըն-
նելով Խորենացու Նկարագրութիւնն Վանայ
բրդի մասին, հետեւցեց թէ Հայաստանումն
էլ պիտի գտնուին բնելագիր արձանագրու-
թիւններ, և հրաւիրեց այս մասին զիտուն-
ների յատուկ ուշադրութիւնը: Իր գրքու-
մամբ, ֆրանսիացի կառավարութեան կողմից
մի ուսումնական՝ Շուլց գերմանացին, ուշ-
զարկուեց Հայաստան, 1826 թուին, տեղի
վրայ պրպատումներ կատարելու և այդ արձա-
նագրութիւնները երեան հանելու: Շուլցը
1828 թուին ուսումնասիրեց Վանն ու իր
չըջականները, և իր կեանքի գնով երևան
հանեց բազմաթիւ բնելագիր արձանագրու-
թիւններ: Խա սպանուեց քրդերի ձեռքով
1829 թ., բայց իր օրինակութիւնները ֆր-
քանափական կառավարութեան ջանքերով

եւրոպա տարուեցին և հրատարակուեցին
Ասիական Հանդէսում (հատ. թ. 3, նո. 52)
1840 թուին:

Շուլցի գտած խալդերէն արձանագրու-
թիւնները թուավ 39 հատ էին, որոնց վրայ
հետքհետէ աւելացան նորերը: Զանագան
գիտուններ սկսեցին փորձեր անել վերծա-
նելու այդ արձանագրաթիւնները: Առաջին
յաջող վերլուծումը կատարեց Հինգը անդ-
լիացին 1817 թուին, նոյնը աւելի զրո-
գացրեց Մատնսիլաս Գիւաս (1880 թ.) և
կատարելութեան հասցրեց Ալյո անդիլացին
1882 թուին: Խա հրատարակեց մի ստուար
աշխատութիւն Գիւ Քունկիթօր Խնացրիթօն
օն Ամս, ԺՈՒԱ 11, էջ 277-732 և հատ. 20,
1-48, որի մէջ նա տալիս է ոչ միայն Խալ-
դերի աշխարհագրութիւնը, պատմութիւնը
և կրօնագիտութիւնը, այլ և խալդերէ-
նի քերականութիւնը, խալդեան արձանա-
գրութիւնները՝ իրենց ընթերցանութեամբ,
թարգմանութեամբ և վերլուծմամբ, ինչ-
պէս նաև խալդերէն լեզուի յատուկ և հա-
ստարակ անունների ամբողջական բառարանը:

Խալդեան բնելագրութեանց վերծան-
ման այս գրութիւնն է որ այժմ ընդուն-
ուած է բոլոր զիտունների կողմից: Այս
գրութիւնը հետեւեալն է.

Որովհետև խալդեան տառաձեւերը (թէ՝
գաղափարանչաններ և թէ տասեր) բոլորու-
վին նոյն են Սսորեականի հետ, ուստի կար-
դում են Սսորեստանցոց այրութենով: —
Այստեղ կարելի էր առարկել թէ տառերի
ձևական նոյնութիւնը անհրաժեշտաբար չի
ենթադրում նաև հնչման նոյնութիւն: օր.
Ո նշանը թէ կայ հայերէն, ուսւերէն եւ
ֆրանսերէն միենոյն ձեռվ, բայց հայերէ-
նում կարգացւում է օ, ուսւերէնում պ,
ֆրանսերէնում և: Այսպէս էլ կարող էին
խալդեան բնելագիր նշանները նոյն լինել
ձեռվ ասուրականի հետ, բայց հնչմումը
տարբեր:

Այս աստրկութիւնը թէ ե արդարացի
է, բայց հերքում է այն իրողութեամբ,
որ տեղերի և անձերի յատուկ անունները
երկուսի մէջ էլ (թէ՝ ասորեստանեան և թէ
խալդեան արձանագրութեանց մէջ) միկնոյն
ձեռվ են գրուած: Արանից հետեւմ է թէ
երկու լեզուի էլ տառերը միենոյն հնչումն
ունին:

Բայց միայն ընթերցանութիւնը բաւար-

կան չեր արձանագրութեանց միաքը հառ կանալու համար . պէտք էր խմանալ նաև լեզուն և թարգմանել : Դրան իրբ միջոց են ծառայում բաղմաթիւ գաղափարանը շանները , և այն որոշչի նշանները որոնք ցոյց են տալիս յաջորդ բառի արժեքը , ինչպէս թէ նա մարդու թէ ասուածի , քաղաքի կամ թէ երկրի յատուկ անուն է , թէ նա շէնք է , և կամ քարէ փայտէ մի առարկայի անուն է ան : Իսկ այն բառերը որոնք մնում են այս շրջանից դուրս , բայց ատրում են համաձայն իրենց դործածուշեան տեղին , համեմատութեամբ այն բռնորդ գէպքերին՝ որոնց մէջ նա դործածուած է և օգնութեամբ միւս բառերից կարենոր է յիշել նաև այն յաջող հանգամանքը որ խարդեան բնեսազիր արձանագրութեանց ընդհանուր ոճը նոյն է առորեստանիան արձանագրութեանց ոճի հետ և նախադասութիւնները ունին միեւնոյն յօրինուածութիւնը : Նախ թագաւորը յիշում է իր անունը և հայրանունը , տալիս է իր տիտղոսները , յետոյ պատմում է իր գործերը , յաճախ վերջում տալիս է անէծքներ՝ արձանագրութիւնը քանդել ու զողների հասցէմուն :

Գնում ենք այսակ մի օրինակ Աէյարց (էջ 448-9) , որով գործնականապէս կարող ենք տեսնել արձանագրութեանց վերլուծան եղանակը :

Խարդեան արձանագրութեանց սիրելի ձևերից մէկը հետեւեալն է :

Ustadi ւ (Երկիր) Manaidi խաբի ւ (Երկիր) Irkiuni խաձար պար ւ (Երկիր) Assur-pinni ւ (Երկիր) Algani 6421 ՛- ՛- ՛-iff (անձ) լ<<< (Եր) i adaki zazgubi adaki ՛- ՛- (ողջ ողջ) լ<<< (Ծիր) agubi 286 ՛- ՛- (անասուն) ւ ՛- ՛- ՛- (ձի) լ<<< (Ծիր) 2251 ՛- ՛- (եղ) paxini (եղ) լ<<< (Ծիր) 8205 լ ՛- ՛- (ոչխար) suse (ոչխար) լ<<< (Ծիր) :

Եթէ այս հատուածի մէջ բաց անենք գաղափարանշանների իրաւալը , կը գտնենք երկիրն Մաննա . . . երկիրն Իրիիունի երկիրն Ոսորեստանի . . . երկիրն Ալգա(նի) 6421 մարգիկ առ ողջք 286 անասուն ձիեր 2251 եղ ներ 8205 ոչխար . . . ներ :

Այժմ սրա զէմ գնենք առորեստանի արձանագրութեանց հետեւել հատուածը , որ նոյնպէս սրանց շատ սիրելի ձևերից մէկն է :

«Դաքարա երկրից ես մեկնեցայ . Բարտ քաղաքին մօտեցայ . Բարա քաղաքը գրաւեցի . 320 նրանց զինուորներից սպանեցի . նրանց եղները , նրանց ոչխարները , նրանց աւարը քշեցի , քաղաքները հրօվ այրեցին : Ասորեստանեանց արձանագրութեանց մի սովորութիւն էլ այն է որ գաղափարանշանի կողքին յաճախ գրւում է նրա ընթերցումը և կամ նրա արժեքի վերջին 1 կամ 2 վանկը , ճիշտ ինչպէս այսօր գրում ենք «2 (Երկու) կամ Բրու» : Բայ այսմ պախինի կամ . . . պախինի որ դրուած է «եղ» գաղափարանշանի կողքին , նշանակում է ակաց , իսկ սուսէ կամ . . . սուսէ , որ զըրւած է առջխարոց գաղափարանշանի կողքին , նշանակում է առջխարոց : Աւրիշ զէպքերում , եթէ գտնենք պախինի և սուսի բառերը համագատասխան իմաստով առանձին գործածուած , ուստինց գաղափարանշանի և առանց որեւէ նախագանձի յաւելման , նըլաւնակում է թէ այդ բառերը ամբողջական են և ոչ թէ ներկայացնում են միայն վերջին վանկերը :

«Ողջ» բառը մի քանի ուրիշ արձանագրութեանց մէջ գործածուելով համանման ձեւով , զրուած է սակայն ոչ թէ գաղափարանշանով , այլ սեխերի ձեւով : Արանից հետեւում է թէ այդ գաղափարանշանները պէտք է կարգալ սեխերի , և կամ թէ սեխերի նշանակում է սողջն :

Այս նոյն գաղափարանշանը՝ որ վերջում էլ ունի յազնակի նշանը , վերաբերում է անշուշտ նախարդ սանձար բառին , որ նոյն պէս յազնակի է : Այժմ նկատի առնենք տղակի բառը՝ որ կրկնուած է երկու անգամ և զազութի , այլութի բառերը , որոնք հաւատաբազէս վերջանում են թի : Բաղմաթիւ արձանագրութեանց համեմատութիւնից երեւում է որ այս վերջաւորութիւնը բայի եղակի առաջին դէմքի նշան է : Այս բոլոր կէտերը միասին ի նկատի առնելով պիտի տեսնենք որ մեր առաջ ունինք ասորեստանի սովորական մի պարծուածի խաղեան թարգմանութիւնը , այն է մարդկանց մասամբ կոսորեցի , մասամբ ողջ ողջ բանեցի :

Այժմ եթէ նկատենք որ ուրիշ արձանագրութեանց մէջ պարու արմատը նըլաւնակում է «շարժուիլո» , խառնի (եղ . . . գէմքի վերջաւորութեամբ) նշանակում է

բազմաթիւ գէպքերում անուանեցին, — ով ներդոյականի վերջաւորութիւնն է և աւաստի (ևզ. ա. գէմքի վերջաւորութեամբ) նշանակում է ամօտեցաց. — կտրող կը լինենք վերի հասուածք թարգմանել այսպէս,

«Մատենալութ երկիրն Մաննայի, նուածեցի երկիրն Երկիուն, զուրս եկայ երկրից Ասորիստանի, երկրից Ալգանի, 6421 անձ մասամբ կոտորեցի, մասամբ ողջ ողջ գերեցի, 286 ձի, 2251 եզ և 8205 ոչխարժ։ Հասուածքից զուրս են զալիս նաև քերականական մի քանի կանոններ, այսպէս 1) ինի ցոյց է տալիս բնութեան խնդիր, 2) ամարդուբափ յոզնակին վերջանում է ի, 3) աեւ շաղկապը յաճախ չի գործածւում խալգերէնում։

Ահա այսպէս են վերլուծուել խալգեան բենագիր արձանագրութիւնները, որոնց ամբողջական հաւաքածոն հրատարակում է այժմ՝ Գերմանիայում. — Արցպուս հնակերպիցին խալգելիարում, էլեման Հառուպատի ձեռքով։

Բենագրերի վերծանութեան այս գըրութիւնը պատմութեան համար կարելի է բաւարար կոչել. բայց լեզուաբանութեան համար շատ պակասաւոր է։ Պատմաբանը որ ուզում է իմանալ գէպքերը, ճանաչել թագուարների անունը, որոշել նրանց ժամանակագրութիւնը, գտնել տիրապետութեան սահմանը, զուրս բերել քաղաքների, գաւառների ու նահանգների անունները ևն, մօտաւորապէս համանում է իր փափազին։ Բայց լեզուաբանը՝ որ պէտք ունի բառական ընդարձակ բառապաշարի, քերականական կանոնների, հոլովման ու խոնարհման ըստ կարելոյն ամրութական պատկերին, չի գտնում դրանք։ Օրինակ թուականները՝ որոնք լեզուի ամենաբնօրոշ բառերի շարքն են կազմում, անձանօթ են, սրովհետեւ գաղափարանշանով են գրուած։

Համարեար էր որոշել թէ խալգերէնը լեզուաբանական ո՞ք ճիշդին է պատկանում։ Առանասարակ ընդունուած է որ խալգերէնը հայերէնի հետ կապ չունի և նոյնիսկ հընդեւրոպական ճիշդին էլ չի պատկանում։ Գերմանացի Մորթման գիտնականի փորձերը հայերէնով լրուելու այդ բենագրերը, անշաջող անցան։

Այսպէս ուրեմն Մորթմանի փորձը բուլորովին ձախողուած էր։

Դերմ. գիտ. ամսաթերթում հու. 26, էջ 465 և շար. 1872 թուին, այս ուսումնականը ուզեցից հաստատել թէ խալգերէնը հայերէն է։ Խնչում է բարդուր գիտունները, նոյնպէս և Մորթման խալգեան արձանագրութիւնները կարգում էր ասուրական այրութենով, բայց որովհետեւ ինքը բաւական հմտութէ տարական այրութենի գրութեան, շատ տեղ նշանները սխալ էր կարգում, երբեմն էլ գաղափարանշանները իրք տառ կարգում։ Ըստունելով որ խալգերէնը հայերէն պիտի լինի, իր այդ սխալ ընթերցանութեամբ ստացած բառերը Մորթման համեմատում էր արդի հայերէն բառերի հետ և իմաստներ հանում։ Հիւրչման հայցէտը ՔՓ 23 (1877) էջ 46-48 ցոյց տուած որ համեմատութեան եղբերը ճիշտ չեն, ծայնական համապատասխանութիւնները իրար չեն բանում. այն ծայնական օրէնքը ները՝ որոնք ըստ Մորթմանի վերլուծման կարելի է զուրս բերել խալգերէնի համար, հայերէնի օրէնքները չեն։ Քրիստոսից մի քանի դար առաջուայ մի լեզուն չի կարող նոյն լինել այսօրուայ վիճակի հետ և նոյն խեկ եթէ խալգերէնը հայերէնը լինէր, շատ տարբեր պիտի լինէր արդի հայերէնից։ Մորթմանի երեան հանած հայերէնը հայերէնի ոչ մի ըրջանին չի համապատասխանում։ Միւնոյն ժամանակ Սէյս անգլիացին ցոյց տուած թէ Մորթմանը ասորեստանեան լեզու չգիտէ և տառանշանները սխալ է կարգում (տես իր յօդուածը ՔՓ 23 (1877, էջ 407-9))։ Մորթման ինքն էլ էր ստիպուած խոստովանելու թէ իր վերծանութեամբ ոչ մի քերականական օրէնքի չի հասնում և թէ միւնոյն բառի հոլովումը կամ խոնարհումը իրարից շարունակ տարբեր են։ Ուրիշ խօսքով չկայ քերականութեան էլ լեզու չկայ։

Մորթմանի ընթերցանութեան և վերլուծման սխալ լինելուն իրբե գերազոյն աշպացոյց բաւական է յիշել այն ծիծալելի հանգամանքը, որ Մորթման Սարգուրի Ա. արձանագրութիւնն էլ՝ որ զրուած է Ասորեստանեան լեզուով, խալգերէն կարծեց և իրը հայերէն վերլուծեց (Սէյս, անդ. էջ 383)։

Այսպէս ուրեմն Մորթմանի փորձը բուլորովին ձախողուած էր։

ԴԻՒՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲՈՅ

۱۰۷

(Յակոբ. Գ.) կարողիկոս Զուզայեցի Ա.
Պոլակն առ Եղիշազուր կարողիկոս ի Հայ-
լսպ) (*):

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կա-

թողեկոս ամենայն Տայաց, եւ պատրիարք Վաղարշապատու Խոստկոս եւ քրիստոսանկար, երկնահանգէտ եւ աղբնատրաս, սրովքէապատ եւ քրովքէանեմ պրոյ աթոռոյ Էջմիածնի, Յորմէ ժամանեալ հասցէ աւանդն աէրունի, Նշանն պանծ ալի տեառն Յիսուսի՝ միաբար եւ չաղկապաղական ի տարւատ եւ ի բացատ միջոցէ, հանգերձ աստուածային լրութեամբն՝ առ խակապէս սիրեցեալ եւ հոգեւոր եղբայրոց իմ Եղիազար կաթողիկոսգ, ցնծու քեզ յարաժամ օրիորդացեալ մանկամբք Ալիոնի ի ինամամա Տեառն Յիսուսի յաւէտապատում բերկրանօք՝ ի ցնծութիւն մեզ եւ ի պարձանս համայնից ի Քրիստոս հաւատացելոց: Ենորհք սկզբնալոյս պատճառին Հօր, եւ սէր համատիպ պատկերի Արգւոյն, եւ զթութիւն գոյակցի ամենասուրբ Հոգւոյն անապառախաղաց մշտահոս ծաւալեսցի ի վերայ քո, եւ ըստ արեգակնային բազմանշոյլ առ քեզ բազմասցի, եւ ընդ քեզ կայացեալ ունակացի յարածգական յաւիտինիւ եւ յարագոյ ժամանակաւ ամէն: Եւ ընդ սիրայրական եւ աղջունական

(*) Բնոքրինակութեան մ.ց Ասմակիս վիրանգիրն է. «Թակոր կաթողիկոսի սիրոց զիր առ Եղիսաբար կաթողիկոս».

Վերջին ժամանակներու Առաջալճեան
Հրապարակ հանեց իր մի նոր տեսութիւ-
նը, որով խաղղերէնը դառնում է Հայերէն
իշղուի մի նախաւոր ձեզ և խաղիներն ու
հայերը իսրեւ ազգ էլ նոյնանում են:

Այս փորձն էլ սակայն անյաջող անցաւ

ՊՐՈՅ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Georgian)

նամակիս՝ գիտութիւն լիցի խոհեմութեանդ, զի ըստ լնարութեան գրոց սրբաց եւ ըստ մարգկութեան յառաջարկութեանց մտաց իմաստնոցն՝ զովելի է ներ նկատումն իրի վախճանականի, յորոց մանաւ անդ Սողամու-

նին է մեզ յատկապէս առնլի՛ թէ հմատու-
թիւն յելս ճանապարհաց գովի՛ զնոյն առեալ
մէր մտած ութիւնամբ յաղագս կապարօնական
պատճառին այնորիկ, ի առջի իջման Միած-
նել Թագավոր Առաջարկ առաջարկ առաջարկ

ար որդեսյա օստութոյ. զարդար զառանց
միմիանց՝ եղաք ուխտո և կուեցաք զաշինու
սրգես զի եղիցի այս օպուտ մերայնոցս ա-
մենայնի, ներկայիցը և ալպացալիցն եկե-
լոց նպատակ։ Եւ զայտոսիկ պարտ էր մեզ

անցրելի պահել հաստատութեամբ, ըստ
Դավթի վկայութեան. Աւխտո դիք եւ կա-
տարեցէք, եւ դարձեալ ըստ Սողոմոնի,
Զինչ եւ ուժութիցես գու Աստածոյ, մի՛
առնեցի հոգու պահել զնու պատի եւ ու ի-

յասրցաւ համուշանէ զամ, որչափ ու ուրեմ
տիցես հատո՛, զի լաւ է քեզ չուխտել քան
ուխտել եւ ոչ հատուցանել ։ Եւ զի հարկ էր
քեզ սիրելոյզ վնայն ուխտ եւ գաշինք ըզ-
մառաւ ածել միշտ եւ պահել ի նոյնութեան,

սորպէս եւ հօն ունէի ծրաբեալ պահեատի ի
մերում մարմեղէն ունենիր թանգի յայնմ
օրէ մինչ չեւ ձեռնամուխ լինելն քո յայդմ
գործ անարատ ունէի զսէր ուխտաղըռա-
թեանն ու մեանն իշ ժողովն է իւ հաւա-

բանաս, որ զգաւոր յարպատճեց և ըստ առաջարկած
դէմի ի բարձունու, ըստ Յորայ: Իսկ յայտ
երիւ ամս զինչ անցք անցին, այն ամենայն
ոչ ըստ կանոնաց էր, եւ ոչ կենարարին
պատուիրան, այլ ստգոտանաց էր որդւ: Զի

գտակի կորսատեան եւ առիթին ամենաբայց չարա-
եաց բազմանար մեքենայիւք մարտ եղեալ
ոզորէր առ սուրբ տեղիսն եւ առ յանդամն
Քըլիստոսի , զի ըստ իւրոյ բազմանացն յանկ
հանձեւ պահե իւ է իւ զն սոսծ սովորական :

թայց գործութիւն եւ վառք թիմատոսի Փրկչին
մերոց, զի լուաւ պաղատանաց ծառայից
իւրոց, եւ յամօթ արար զանսարկու պիզծն,
եւ զիւր վաղալար յորոգայթն մանրեալ
փշորեաց, եւ ըստ համաց իւրոց զիւրն խա-

զաղութիւն տնօրինեալ հաստատեաց, թէ
այսր եւ թէ այդք. այսուհետեւ մը եւս
աշխատ արացցես զիմս ծերռութիւն։ Դարձ
ձեալ ծանիր, սիրեիլի, զի, մեք յաւուր

երկուշաբթին ող զինի Փայծառակերպութեանն միջնորդութեամբ Ասրգիս վարդապետին պատրիարքի և Հայութածօք քահանայից և ժառովրդոց՝ արարաք խա-